

## ԺԱՄԱՆԱԿԱՆ ԴԵՊՈՒՅԻ

ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒԺԵՆ :

Մօսեր Գերմանիայի մէջ երկու իրեք տաղեց կան աղջիկ մը պատիկ գետի մը քովը քալելով ծաղիկ կը ժողվէ եղեր . յանկարծ կը սահի . ջրին մէջ կիյնայ ու մէկէն տակը կ'երթայ . միայն մէկ ձեռքը ջրէն դուրս կ'երկնցընէ : Ասոր քոյրը՝ վեց տարեց կան հոն մօս է եղեր . կը վազէ ջրին քովը , մէկէն ձողմը կ'երկնցընէ պատիկ քրոջն որ անոր ծայրը բռնէ ու ազատի : Երբոր կը տեսնէ որ անիկայ աւելի ջրին տակը երթածու վրայ է , կը ցատքէ կը նետուի ջրին մէջ , որ ինչուան վիզը կը հասնի եղեր . կ'երկնցընէ ձեռքը , քրոջը թեւէն կը բռնէ ու դուրս կը քաշէ կը խալսէ :

ԵՐԵՎԵՆ ՀԱՅՔԱՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԽՈՐ ԳԻՒԹ :

ՔԱՆԻ մը տարի կայ որ երկթէ Ճամբաներուն վրայ կառքերը քայլցընելու համար՝ շոդիի տեղ Ճնշուած օդ գործածելու գիւտը հնարուած է : Հիմա աս գիւտիս վրայ շատ փորձեր կ'ընեն Լոնտրա , ու գրեթէ ամէն Ճամբանապետներուն ու գիտուններուն խեցը միտքը աս նոր մեքենային վրայ է : Թէ աս մեքենան հնարողը , որ է Փարսի անունով անգղացին , և թէ անիկայ տեսնողները ամէնքը մէկ բերան կը հաստատեն թէ աս գիւտիս յաջողելուն ամեննեին տարակոյս ջայ : Մէքենային շարժողը , ինչպէս որ ըսինք , Ճնշուած օդն է . աս օդը մասնաւոր ամաններու մէջ գոցած ու Ճամբուն վրայի օթևանները պահած է . կառքը անոնցմէ մէկուն հասնելուն պէս՝ ան օդէն կ'առնէ ամաններով , ու օդը որ Ճնշուած ըլլալով կ'ուզէ ընդարձակի՛ կամաց կամաց կը թողուն , ան օդին ելլելու ատեն ունեցած ուժովք կառքը կը քուփէ կ'երթայ , ու իր ետեւն մէկալ կառքերն ալ կը քաշէ կը տանի շոգեշարժ մեքենայի պէս : Կառքերուն արագութիւնը միակերպ պահելու համար , որով հետեւ ընդարձակուած օդին ուժը կամաց կամաց կը պակի , անոր համար օդի ամաննին ետեր ուրիշ օդարան մըն ալ կայ որ պէտք եղած ատենը նոր օդ կը լեցընէ մէջը : Յայտնի բան է որ աս գիւտը յաջողելու ըլլայ նէ , անբաւ օգուաներ ունի . վը զի ած ուրին ծախքը բոլորովին կը վերնայ , ու կրակէն առաջ եկող վլասներուն առաջքը կ'առնուի :

Պատրաստ պատասխան :

Մօսեր Գաղղիոյ Պէլվիլ քաղաքը թէատրոնի մէջ գուշ կալաշն ըսուած կատակերգութիւնը կը ձեւացընէն եղեր : Խաղին իիստ տաք կտորներէն մէկուն մէջ հանդիսականաց կողմէն յանկարծ սագի ։ Պլուկիս մը կը նետուի խաղողներուն աեղը :

1 Պ.ա.:

Այսպիսի անձունի կատակը տեսնելով հանդիսականները այնչափ կը ծիծաղին որ պէտք կ'ըլլայ քանի մը վայրկեան խաղը գագրեցընէլ : Ծիծաղը կտրուածին պէս , գերասաններէն մէկը խաղը առաջ տանիլ ըսկամած՝ կը գառնայ կըսէ հանդիսականներուն . « Պարոններ , ձեր մէջէն ով որ իր գլուխը կորացնցուցեր է նէ հոդ ցնէ , իմ քովս է , խաղէն ետքը կուտամիրեն » :

Հունական թագաւորին Երախուագիտունին :

ՃՈՒՆՏՏՈՒԹՅՈՒՆ հիմակուան թագաւորը գուղիկ մու Բ , որ թագաւորեց 1840ին , Վաթերլոյի հուշակաւոր պատերազմին մէջ զարնուելով սամափիկ վերք մը առած էր . ան միջոցին Ռայնէր անունով տասնապետ մը վրայ հասեր՝ գրկեր էր զնկը ու պատերազմի տեղէն դուրս հաներ էր որ Գաղղիացւոց ձեռքը միյնայ : Աս տարի օգոստոսի 3ին ուզեր է թագաւորը տեսնել ան կորիճ մարդու , ու շատ մը ստակ անոր պարգև տալին ետքը հրաւիրեր է որ Ճամբայ ելլեւէն առաջնորէն գայ զնկը տեսնելու :

ԿՐԻՒ ՕԴԱՊԱՐԵՒԸ :

ԿՐԻՒ անունով Անգղիացւոյն օդապարիկին վրայ ուրիշ ատեն տեղն 'ի տեղը խօսեր ենք . հիմա առնոր լուրս ունինք որ մօսերս նոյն օդապարիկ Անգղիայի մէջ նորէն վեր ելեր է , ու մէջը կան եղեր՝ պարոն կրինէն ու իր ամուսինէն զատ ութը Ճամբորդ , որոնց մէկն է եղեր Պէտֆորտի գուբար , Աս օդապարիկը իրեքհարիւր չորս անգամ էր որ վեր կ'ելլեր . և որովհեաւ Անգղիայէն գերմանիա անցաւ քանի մը տարի առաջ ու Կասակի գքսու . թեան երկիրը իջաւ , անոր համար անունը Կասա դրեր էին : Անցած ամսուն մէջ ուրիշ օդապարիկ մըն ալ շներ է , որուն միջոցն է եղեր 26,000 քառակուսի ոսնաչափ . և ասով երկու անգամ ալ նորէն բարձրացեր ու անվտանգ վար իջեր է :

ՎԵՐԱՎ ԲԱՇԻՒԸ :

ՔԱՆԻ մը ամիս կայ որ Վեսուվ ըսուած հրաբուխ լեռը , որ սովորաբար միակերպ կը միսայ , բռնկած է , ու բոց կը հանէ , ատեն ատեն ալլաւ գուրս կուտայ : Աս մօսերս նոր երևոյթ մըն ալ տեսնուեր է աս լեռան գլուխը . այսինքն կամարածե գեղեցիկ լոյս մը՝ հրաբուկին բերնին վրայ բարձրացեր է , ու հրաբուկին ալ գէպի վեր իսել մը կրակած լաւաներ ու քարեր նետուեր են . քանի մը մօս քաղաքներ ալ քիչ մը գետաշարժ է . վեր է :